

Մեծամոր համայնքի սիրելի՛ բնակիչներ,

Քրիստոս ծնավ և հայտնեցավ:

Որդիաբար շնորհավորում եմ բոլորիս Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առթիվ:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, իր գալստյամբ լուսավորեց ու ցույց տվեց կյանքի, ապրելու լուսավոր ճանապարհը: Մենք՝ հայերս, որպես քրիստոնեությունն աշխարհում առաջինը պետական կրոն ընդունած ազգ, գնահատում ենք քրիստոնեական արժեքները և ջանում ենք դրանք պահպանել: Հիսուս Քրիստոսի ծննդյան և Աստվածահայտնության տոնը համարվում է Հայ առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկը և իր խորհրդով մեզ բոլորիս ճանապարհ է տալիս դեպի լուսավորը, մաքուրն ու ազնիվը՝ արարելու, ստեղծելու այն հրաշքը, որով նա աշխարհ եկավ, հետո իր խաչելությամբ Աստվածացավ: Եվ ուրեմն մենք՝ որպես հավատավոր ժողովուրդ, պետք է չչեղվենք ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ խորհրդից ու անենք արժանին, որպեսզի ամրապնդենք մեր պետականությունը, պահպանենք մեր անկախությունը ու բարին անենք մեր հարազատներին ու սիրելիներին:

Սուրբ Ծնունդը հոգևոր վերածնունդի տոն է, օր, երբ Հիսուս ծնվում է մեր յուրաքանչյուրի հոգիներում՝ մաքրազարդելով մեր սրտերը: Թող որ Քրիստոսի սերը, կրողվը լինի մեր սրտերում և ընտանիքներում: Թող նրա խաղաղությունը թևածի մեր երկրում:

Շնորհավո՛ր Սուրբ Ծնունդ:

Քրիստոս Ծնավ և Հայտնեցավ:

– Օրհնյալ է Ծնունդը Քրիստոսի:

Հարգանքով Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյան